

## ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Նախնադարյան արվեստը գրավել է շատերի հետաքրքրությունը: Այս թեմայով զբաղվել են հնագետներ, հնէաբաններ, պատմաբաններ, մարգարաններ, ժայռագետներ և այլն: Սակայն ավանդական է դարձել, որ յուրաքանչյուր երկրի ուսումնասիրող հրատարակի և քննի միայն իր երկրի նյութերը: Լավագույն դեպքում քննվել են, թեև գլոբալ, սակայն առանձին թեմաներ, ինչպես օրինակ՝ «Արվեստի առաջացումը», «Մարդու պատկերը նախնադարյան արվեստում», «Պաշտամունքը և կերպարվեստը» և այլն: Հետևանքը եղել է այն, որ նախնադարյան արվեստի համաշխարհային, աշխարհագրական, ժամանակագրական, ոճական և կարևոր շատ այլ հարցեր համեմատական քննության չեն ենթարկվել և մնացել են անհայտ: Նման վիճակի պատճառները տարբեր են: Ամենատարածվածը նյութերի համեմատաբար ուշ հայտնաբերվելն ու հրատարակվելն է, տեղական հրատարակությունների գովարամատչելիությունը, վերջուպես՝ անորակ հրատարակումները, որոնք նվաղեցրել են հետաքրքրությունը: Նախնադարյան արվեստով զբաղվողների գերակշիռ մասը ոչ միայն սահմանափակվել է տեղական նյութի հրատարակելով, այլև արվեստի գործերը գիտել միայն որպես սլատմահնագիտական, ազգագրական նյութ: Այս ամենի պատճառով վաղուց հասունացել է համաշխարհային նախնադարյան նյութի ամբողջական և արվեստաբանական համեմատական քննության պահանջը: Կարևոր է նշել նաև, որ նախնադարյան արվեստի աշխարհագրական կոորդինատների ուսումնասիրությունը ցույց է տալիս մի շարք անսպասելի, և դրանով իսկ մեծապես հետաքրքիր, առանձնահատկություններ: Ամենաուշադրավր հնագույն կերպարվեստի տեղագրությունն է խստորեն առանձնացված վայրերում: Հիմնական մասը գրանցված է Հյուսիսային կիսագնդի 55-30 աստիճան հորիզոնականների միջև և ձգվում է Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս: Գոտին անցնում է ամենատարբեր բնական պայմանների միջով: Սկզբում Միջերկրական ծովը բաժանում է երկու մասի՝ եվրոպական, համեմատաբար նոսր, և շատ հագեցված աֆրիկյան: Ասիական հատվածը մասամբ Հյուսիսասում է, այնուհետև անցնում է Միջին Ասիա, Սիրիա, Մոնղոլիա, Չինաստան, Ճապոնիա և կարծես թե պետք է ավարտվեր, քանզի ընդհատվում է Խաղաղ օվկիանոսով, սակայն շարունակությունը կարելի է տեսնել ԱՄՆ-ի տարածքի նույն 55-30 չափանիշներում հատկապես Կալիֆորնիա, Կոլորադո, Կանզաս, Միսսուրի և այլ նահանգներում: Այս գոտում ժայռապատկերներով առանձնապես հարուստ են Եվրոպայում՝ Իսպանիան ու Ֆրանսիան, Աֆրիկայում՝ Ահաբան, Ասիայում՝ Հայաստանը, Ղազախստանը և Սիրիան: Հորի-

գոնական այս ահռելի գոտին հատում են երեք, գուցե և չորս ուղղահաս-  
յացները:

Առավել առեղծվածայինը սկիզբն է, ուր հորիզոնական գոտին լայ-  
նանում է դեպի հարավ մինչև 19° հորիզոնականը և մեգալիթյան շինութ-  
յուններով ու պատկերային հատուկենտ օրինակներով տարածվում է դեպի  
Հյուսիս՝ մինչև 60° հորիզոնականը Բրիտանական կղզիներում: Քանի որ  
ամբողջական գոտի լինելու համար անհրաժեշտ հագեցվածությունը չկա,  
ուստի բավարարվում են միայն երևույթը փաստելով: Անտարակույս, վառ  
արտահայտված գոտի է հաջորգը, որը ներկայացնում են իբրև առաջին:  
Այս գոտին, ի դեպ, ամենահագեցվածն է: Սկսվում է 70° հորիզոնականից  
և 25-40 ուղղահասյացներով իջնում հարավ: Փոքր Ասիայի և Անգրկովկա-  
սի տարածքներում հատվում է հորիզոնական գոտու հետ: Շարունակութ-  
յունը տանում է Աֆրիկա, Եգիպտոս և այդ մայրցամաքի նույն 25-40°  
ուղղահասյացներով ավարտվում է Աֆրիկայի հարավում: Այստեղ կա մի  
փոքր ընդմիջում՝ դա Առաջավոր Արևելքի հատվածն է: Պատճառը հավա-  
նաբար այն է, որ այս երկրամասում քաղաքակրթությունների տարբեր երևա-  
ցել են գրեթե միջին քարի գարի շրջանում և նախնադարյան կենցաղն ու  
արվեստը չեն ձևավորվել: Ուշագրավ է այն, որ այստեղ տարածված էր  
փորագրություններ վայրի ժայռերի վրա (Հաթի, Միջագետք): Սակայն թե-  
մաները, այնուհանգերձ, սլետական դադափարի արտահայտությունն ու-  
նեին: Ինչ վերաբերում է նկարչությանը, Չաթալ Հույուկի նոր քարիդար-  
յան որմնանկարները և Միջագետքի կավամաններից շատերի վրա կատար-  
ված նկարներն արված են ժայռապատկերային թեմաներով և գծային սխե-  
մաներով: Այս ամենից հետևում է, որ դտնվելով նախնադարյան արվեստի  
նշված դոտում՝ նախնադարյան արվեստի բնութագրերը նկատելի է անգամ  
այն վայրերում, որտեղ առաջ էին եկել հնագույն քաղաքակրթության  
տարբերը:

Երկրորդ ուղղահասյացը ամենակարճն է: Սկսվում է Ուրալյան լեռ-  
նաշղթայի Հյուսիսից՝ 65° հորիզոնականի մոտակայքում և 55-65° ուղղա-  
հասյացների միջև ընկած տարածքով, Ուրալյան լեռնաշղթայով անցնում է  
հարավ, ուր հորիզոնական գոտու հետ խաչվում է Ղազախստանի տարած-  
քում: Այնուհետև, կտրելով միջինասիական տարածքը, գալիս է Աֆղանս-  
տան և ավարտվում է Հնդկաստանում: Երրորդ ուղղահասյացն ամենա-  
նոսրն է, սակայն ամենաերկարը: Սկսվում է Չուկոտկայից՝ բևեռային դո-  
տուց Հյուսիս՝ 180-ական ուղղահասյացի մոտակայքում, Ասիայի Հյուսիս-  
արևելյան ծայրից, այսինքն նույն գծից, որը շարունակում է Գրինվիչի  
գիծը, ուր գտնվում է գոտու սկիզբը: Այստեղ գոտին Կամչատկայից ճյու-  
ղավորվում է Խաղաղ օվկիանոսի երկու ափերով: Ինչպես Միջերկրական  
ծովը, այնպես էլ Խաղաղ օվկիանոսը, այս գոտին հատում են երկու մասի:  
Ասիական ճյուղը՝ դեպի հարավ անցնում է ասիական մայրցամաքի  
արևելյան ափով և ինգոնեգական կղզիներով ավարտվում է Ավստրալիա-  
յում: Ամերիկյան ճյուղը՝ Ամերիկայի արևմտյան ափով, Կորդիլիերներով,  
սակավ հնավայրերով իջնում է Ամերիկայի կենտրոնական, այնուհետև  
հարավային տարածքները, ուր հնավայրերի թիվը նկատելի աճում է: Այս  
երկու ճյուղերը կարելի էր համարել առանձին գոտիներ, սակայն Հյուսիս-

սայինի սկիզբը երկուսի համար մեկն է՝ Չուկոտկան, որի շարունակութ-  
յունը դեպի հարավ գոյություն չունի: Այն առկա է Ալյասկայում, այնու-  
հետև Կանադայում, ԱՄՆ-ում և այլն: Տարածական բնութագիրն այսպի-  
սին է. տարածքների սահմանները խիստ գծված չեն, ավելին առանձին  
հատվածներում երբեմն լայնանում կամ նեղանում են, գոգավորվում են,  
երկարում, ընդհատվում, նոսրանում: Պատճառները ստույգ պարզել անհ-  
նար է, քանզի ոչ բոլոր հուշարձաններն են մեղ հասել: Գոտիների առա-  
ջացման հարցում թերևս գործել են բնական, ազգագրական և անհայտ այլ  
պատճառներ: Եվ այնուհանգերձ, նախնադարյան կենցաղով անցած ժողո-  
վուրդները, իրենց ապրած ժամանակաշրջանից անկախ, միայն այս տա-  
րածքներում են նկարել, քանդակել: Տեղադրության նկարագրված առանձ-  
նահատկությունները տակավին քննության մեծ կարիք ունեն, սակայն ա-  
ռայուր այս հարցը երբեք չի բարձրացվել, անգամ չի նկատվել: Նման ա-  
նուշադրությունը հետևանք է այն պարագայի, որ ուսումնասիրողները  
դեռևս չեն փորձել նախնադարյան կերպարվեստը հետազոտել ամբողջութ-  
յամբ:

Կարևոր է նշել, որ նախնադարյան հնավայրերը տարածված են աշ-  
խարհով մեկ, և քանակով դրանք անհամեմատ ավելի շատ են, քան կեր-  
պարվեստի հնավայրերը: Արվեստի նյութը հանդիպում է հիմնականում  
ժայռոտ վայրերում: Հարցի էությունն այն է, որ տեղանքի այս առանձնա-  
հատկությունն ունի միայն հավանականություն արվեստի ստեղծագոր-  
ծությունների առաջացման համար, որը, սակայն, բնավ պարտադիր չէ:  
Նպաստավոր են եղել խոր քարայրները, ուր մարդիկ բնակվել են և հա-  
ճախ նաև նկարել: Սակայն վերստին պետք է նշեմ, որ քարայրների, այդ  
թվում նաև բնակեցված քարայրների թիվն անհամեմատ ավելին է, քան  
պատկերազարդ քարայրների քանակը: Նույնն է վիճակը նաև ժայռոտ-  
քարքարոտ վայրերում:

Ժայռապատկերների տեղադրությունը ներկայացնող աշխարհի  
քարտեզ չի հրատարակվել: Եղել են միայն լոկալ քարտեզներ, որոնք ցու-  
ցադրել են յուրաքանչյուրն իր ուսումնասիրած տարածքը և բոլոր դեպքե-  
րում, ըստ քննվող տեղական նյութերի, իսկ դրանք ամբողջական պատկեր  
ստեղծելու ոչ առաջադրանք ենք ունեցել, ոչ նպատակ: Անհամեմատ ավե-  
լի հաճախ հրատարակվել են նախնադարյան հնավայրերի հնադիտական  
քարտեզներ: Դրանք մասամբ մերձենում են արվեստագիտականին, եր-  
բեմն էլ հնարավոր է կռահել նաև արվեստագիտական հնավայրերը<sup>1</sup>: Առա-  
վել ուշագրավ են ռուսական հրատարակությունները՝ հատկապես այն  
պատճառով, որ երկրի տարածքը մեծ է<sup>2</sup>:

Նախնադարյան արվեստի հնավայրերի հիշյալ քարտեզներում, սա-  
կայն, հրատարակողները, ունենալով անձնական հետաքրքրություններ,  
անտեսել են հնավայրերից շատերը: Ամբողջական պատկերը ներկայացնող

1 С. Н. З а м я т н и н. О локальных различиях в культуре палеолитического периода. Происхождение человека и древнее расселение человечества. — Труды ин-та этнографии АН СССР. Новая серия. Т. XVI, М., с. 121.

2 Տե՛ս Ա. Ս. Օ կ л а д н и к о в. Утро искусства. Л., 1967, с. 18, 21. Այս քարտեզներում ակնհայտորեն ընդգծված են ռուսական տարածքով անցնող հորիզոնական և առաջին ուղղահայաց գոտիները:

քարտեզ կարող էր հրատարակել միայն նախնադարյան արվեստն ամբողջությամբ հետազոտողը: Կարեոր է նշել, որ նախնադարյան արվեստի հուշարձանները հիշյալ տարածքներում ստեղծվել են մոտ 40.000 տարիների ընթացքում, և նկարել կամ քանդակել են նախնադարյան կենցաղով ապրած ոչ բոլոր ժողովուրդները և ոչ ամենուրեք: Ըստ կազմված քարտեզի, մեր մոլորակի վրա նախնադարյան արվեստի տարածումն ունի այսպիսի պատկեր.



Քարտեզի քննությունը բարձրացնում է հարցեր. որո՞նք են կերպարվեստի առաջացման, ինչպես և բացակայություն պատճառները, որո՞նք են աշխարհագրական տարածվածության օրինաչափությունները: Կարելի է մտածել, որ ինչ-որ տեղերում չի եղել կավ կավաներկեր պատրաստելու համար, սակայն այդօրինակ վայրերում, եթե դտնվել են նշված դոտիների տարածքում, տարածվել էր փորագրությունը քարի, ոսկորի վրա, բայց ինչո՞ւ ոչ ամենուրեք, ուր ապրել է նախնադարյան մարդը: Կարելի է մտածել, որ տարածման օրինաչափությունների հիմքում միգրացիոն երևույթներ են եղել:

Պատմության տարբեր շրջաններում հայտնի են էթնիկական տեղաշարժերի երկու հիմնական ուղղություններ, որոնք կրկնվել են ավելի հաճախ, և որոնց հետևանքով առաջ են եկել էթնիկ նստվածքներ՝ ժամանակ առ ժամանակ փոխելով առանձին երկրամասերի էթնիկական կազմը: Առավել նշանակալին Արևելք-Արևմուտք ուղղությունն էր: Նախնադարի վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան, սակայն հնագիտական նյութեր որոշ վկայություններ տալիս է: Ֆրանսիական սոլուտրեի բնակչությունը Ա. Բրեյլը ծագեցնում է Արևելքից: Մադլենցիները ևս, նրա կարծիքով, եկել են Արևելքից, ընդ որում արևելք ասելով մասնավորապես նկա-

տի ունի Հեռավոր Արևելքը<sup>3</sup>, այսինքն այն վայրերը, որտեղից ժողովուրդների հայտնի տեղաշարժերի ժամանակ գալիս էին հոնները, մոնղոլները, թուրք-թաթարական ցեղերը, թերևս հնում շումերները: Մարդկային պատմության մեջ, դոնե գրավոր քաղաքակրթության դարերում, Արևելք-Արևմուտք ուղղությունը եղել է ամենահաճախ հանդիպողը, և ընդմիջս կրկնվել է (հոնները՝ I-V դդ., արարները՝ VII-X դդ., մոնղոլ-թաթարները XI-XVI դդ.): Կարելի է վստահեցնել, որ նման երևույթները չեն բացառվել ավելի վաղ ժամանակներում ևս: Անտարակույս, պատճառների բացահայտումը շատ հարցերում օգտակար կլինեն, թերևս հնարավորություն կընձեռներ գիտական բացատրություններ ունենալ անսովոր թվացող երևույթների վերաբերյալ: Արդ, կարևոր է նշել նաև ժամանակադրական մի առանձնահատկության մասին, որը մասնակի բացառություններով նկատվում է հորիզոնական գոտում: Դեպի արևելք դրանք նորանում են: Եթե Ֆրանկո-կանտարիական արվեստը թվագրվում է մինչ մագլենով, այսինքն մինչ XV-X հազարամյակով, ապա կենտրոնական Եվրոպան և Սա-հարան՝ VIII-III հազարամյակով, իսկ ողջ Ասիան, Կապովայա քարայրից բացի, թվագրվում է V-I հազարամյակով: Ոմանց կարծիքով պատճառը Հեռավոր Արևելքում կատարվող դեմոգրաֆիական սլայթյուններն են, որոնց հետևանքով ժողովուրդները արևմուտքում տեղ էին հասնում հասունացած և, ըստ բարենպաստ աշխարհագրական պայմանների, կայունություն էին ձեռք բերում: Այդ պատճառով՝ որքան դեպի արևմուտք, այնքան տիրում է հասուն իրավիճակը: Քաղաքակրթության ժամանակներում անդամ հոսուն ելակետը կայունություն էր ստեղծում: Միաժամանակ միգրացիոն երևույթները առանձին վայրերում առաջ էին բերում մեծ և հետևապես համեմատաբար կայուն կուտակումներ: Մինչև ծայր արևմուտք, հավանաբար հաճախ չէին հասնում և այդ է պատճառը, որ Ֆրանկո-կանտարիան կարողացավ երկար և բեղմնավոր դոյատևել:

Ու. Օուելսը գտնում է, որ բանական մարդու հայրենիքը Աֆրիկան է: Ու. Օուելսն ունի մասնավոր մի կարծիք ևս, որի համաձայն բանական մարդու հայրենիքը Մերձավոր Արևելքն է: Իր կարծիքը նա ներկայացրել է «Նոյյան տապան» բնութագրով<sup>4</sup>:

Ա. Բրելլը համոզված էր, որ հատկապես միգրացիոն իրադարձություններով օրինյակցիները յուրացրին Միջերկրականի տարածքները, Կենտրոնական և Արևմտյան Եվրոպան<sup>5</sup>: Երկրորդ ուղղությունը հյուսիս-հարավն է: Այս ուղղությունների հարցում չի բացառվում կլիմայական փոփոխությունների դերը, մանավանդ վերջին սառցապատման շրջանից

3 S t u r e u i l. Les subdivisions du paleolithique superieur et leurs significations – Congres international d'Archeologie prehistorique. Compt rendu de la XIV session, T. 1, Geneve, 1913, p. 20. S t u r e u i l. П. П. Г р и г о р ь е в. Начало верхнего палеолита и возникновение Homo Sapiens в Европе и на Ближнем Востоке. Л., 1965, с. 4.

4 W. W. H o w e l l. Remains modern Man evolutionists versus migrationists evolution – Human evolution. T. V, N 5, 1976, p. 479-480.

5 H. B r e u i l. Subdivision... Op. cit.

հետո, որն էլ նշում է Ա. Բրեյլը<sup>6</sup>: Բոլոր դեպքերում, ժամանակադրական տարբերություններ հարավի և հյուսիսի միջև առանձնապես նկատելի չեն:

Ժամանակի և տարածության կոորդինատները թեև տալիս են հետաքրքիր տվյալներ, սակայն այդ տվյալներով անկարելի է իմանալ, թե որտեղ է սկիզբը՝ Արևմուտքում, ուր պահպանվել են նախնադարյան արվեստի հնագույն օրինակները և այն էլ արվեստի ամենահարուստ ձևերով, թե՛ Արևելքում, որտեղից սկսվեց ամեն ինչ: Վերջապես եղե՞լ է արդյոք մեկ կամ մի քանի սկիզբ միևնու՞րյն, թե տարբեր ժամանակներում: Պետք է ընդունել, որ կերպարվեստը առաջացել է հին քարի դարում, այնուհետև հնարավոր է վերստին կրկնվել է ինչպես նույն, այնպես էլ տարբեր վայրերում՝ հաջորդ դարերում ևս և այն էլ՝ ոչ մեկ անգամ: Ավելի տրամաբանական է մտածել նաև, որ ժամանակներն իրարից անջրպետներով չեն բաժանվել և ավանդույթների կապը մեծ կամ նվազ չափով իր դերն ունեցել է տարբեր վայրերում, տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների մոտ: Ակներևաբար միայն այս նկատառումներով կարելի է բացատրել պաշտամունքային կերպարների նույնությունը, ինչպես օրինակ հղի կնոջ պաշտամունքային կերպարի տարածումը տասնյակ հազարավոր կիլոմետրերով, կոտոշավոր մարդկանց կերպարը՝ տարածված ողջ աշխարհով, նիշերի նույնությունը, որոնք տասնյակ հազարավոր կիլոմետր հեռավորությամբ վրա հանդիպում են կատարյալ նույնությամբ, հաճախ նույն իմաստներով:

Ահա առավել տարածված պատկերների մի շարք.

- ⊙ Մոնդոլիա, Սիբիր, Միջին Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Բելգիերի, Կարելիա, Ֆրանսիա, Իսպանիա և այլն:
- ⊙ Մոնդոլիա, Սիբիր, Միջին Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Հնդկաստան, Կարելիա, Ֆրանսիա և այլն:
- ⊙ Մոնդոլիա, Անդրբայկալ, Միջին Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Կարելիա, Ֆրանսիա, Իսպանիա և այլն:
- ⊙ Մոնդոլիա, Միջին Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Իսպանիա, Ֆրանսիա և այլն:
- ⊙ Մոնդոլիա, Սիբիր, Հայկական լեռնաշխարհ, Ֆրանսիա, Կարելիա և այլն:
- ⊕ Մոնդոլիա, Անդրբայկալ, Սիբիր, Հայկական լեռնաշխարհ, Կարելիա և այլն:
- ⊙ Հայկական լեռնաշխարհ, Անդրբայկալ, Կարելիա և այլն:
- ⊙ Հայկական լեռնաշխարհ, Մոնդոլիա, ԱՄՆ և այլն:
- Δ Կիլիկիա, Հայկական լեռնաշխարհ, Մոնդոլիա, ԱՄՆ, Չիլի և այլն:
- × Հայկական լեռնաշխարհ, Կորիստան, Բարեկամության կղզիներ, Ավստրալիա, ԱՄՆ և այլն:
- ⊙ Մոնդոլիա, Կորիստան, Հայկական լեռնաշխարհ և այլն:

6 H. Breuil. Les industries à éclats du paleolithique ancien, I. Le Clactonien-Prehistoire. T. I, № II, Paris, 1932.

+ Մոնղոլիա, Անդրբայկալ, Աիրիր, Միջին Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Չիլի, Մեխիկո, Ավստրալիա և այլն:

Թերևս այսպես հնարավոր է բացատրել գեղարվեստական մտածողության, մշակված կերպարների, անգամ ստեղծված գծապատկերային սխեմաների նմանությունը, երբեմն նույնիսկ՝ նույնությունը: Շատ ավելի անբացատրելի են արվեստագիտական մտածողության նույնություններն ամենատարբեր ժամանակներում և տարածքներում ապրած ժողովուրդների մոտ: Ցավոք, այս և մի շարք այլ հարցեր առայսօր քննության առարկա չեն եղել:

Նախնագարյան արվեստի աշխարհագրական բաժանման բնութագիրը հետաքրքիր է առավելապես այն պատճառով, որ հետագայում նմանօրինակ ընդգծված սահմաններ քաղաքակրթությունների տարածումը չի ունեցել: Անշուշտ, եղել են վայրեր, երկրներ, որտեղ մեծ վերելքներ են արձանագրվել և յուրաքանչյուրն ունեցել է իր ժամանակաշրջանը և իր վայրը: Այն ժամանակ, երբ բարձր զարգացման էր հասել Ֆրանկո-կանտարիական արվեստը (30-10 հազարամյակներ), մեր մոլորակի այլ վայրերում համեմատելի որևէ այլ մշակույթ չկար: Հաջորդը Սահարան էր, որը նույնպես միջին և նոր քարի դարերում միակ զարգացած վայրն էր: Ուշագրավն այն է, որ քարի դարի ողջ շրջանում մշակութային զարթոնքի օջախները սկսում և անհետանում էին Միջերկրական ծովի շրջաններում: Գոյություն ունի նույնիսկ տեղաշարժի մասնակի ուղղություն՝ Ֆրանկո-կանտարիան իր հնությունը որպես ելակետ, որին միջին քարի դարում հաջորդեց տեղաշարժը դեպի հարավ, Իսպանիայի հարավ-արևելյան ափ, այստեղից ավելի հարավ՝ Աֆրիկա, ուր բուռն ծաղկում ապրեց Սահարայի արվեստը միջին և նոր քարի դարի շրջանում: Այստեղից տեղաշարժը ուղղվեց գեպի արևելք: Այդ տեղի ունեցավ III հազարամյակում և պատճառը երկրամասի անապատացումն էր<sup>7</sup>: Եթե այստեղ պատճառը հայտնի է, ապա նախորդները մնում են անհայտ: Չի բացառված, որ հնագույն տեղաշարժերի պատճառները արևելքից եկող մարդկային մեծ բազմությունների զավթողական բնույթն էր: Ինչ հաճախականությամբ են եղել գրանք, նույնպես մնում է անհայտ, գիտենք, որ X հազարամյակից հետո Ֆրանկո-կանտարիական օջախն այլևս չվերականգնվեց:

Ուշագրավ է նաև այն, որ Սահարայի ժողովուրդը, դատելով արվեստի ժամանակագրությունից և ոճական նույնությունից, տարածվեց Աֆրիկայի արևելյան շրջանները, այդ թվում Եգիպտոս, ուր սակայն կորցրեց իր նախնագարյան բնույթը մեծ քաղաքակրթության առաջացման ներքո:

Բոլորովին այլ էր տարածման եղանակը Արևելքում: Այստեղ այն չունեցավ ժամանակագրական մեծ տարբերություններ: Հյուսիսի և հարավի ժայռապատկերները ևս առանձին բացառություններով թվագրվում են բրոնզով, երկաթով, եթե հաշվի չառնեն ավելի ուշերը, որոնք երկար պահ-

7 R. M o u n y. Prehistoire et zoologie: La grand faune Ethiopienne du nord oust Africain du paleolithique a nos jours. Bull. l'institute Français d'Afrique Noire XXVIII, ser. A. N 1, Paris, 1956. էջ 250-251. Տե՛ս նաև В. Б. М и р и м а н о в. Первобытное и традиционное искусство. — Малая история искусств, М., 1973, с 8:

պանվող կիսավայրենի, քոչվոր կենցաղի հետևանք էին: Արևելքի ժայռապատկերներն իրենց և՛ թվագրությամբ, և՛ արվեստով գրեթե չեն տարբերվում:

Արևելքը միաժամանակ առանձնանում է նախնազարյան արվեստի շատ հին, կղզիացած հուշարձաններով: Այսպիսիներեց է Կապովայա քարայրը Բաշկարստանում, ուր մամոնտների պատկերները կասկած չեն թողնում XI—IX հազարամյակներով թվագրելու հարցում<sup>8</sup>:

Առանձնակի են կանգնած Ավստրալիայի ժայռապատկերները, որոնց թվագրումը դժվար է այն պատճառով, որ ավանդույթյան պահանջներով դրանք պարբերաբար նորոգվում են: Բոլոր դեպքերում, ի տարբերություն աշխարհի բոլոր ժայռապատկերների, ավստրալիականները նախ բոլորը պաշտամունքային թելադրությամբ զանազանվում են ոճական առանձնահատկություններով: Այսքանով, որ տեղական հետազոտությունները աշխարհագրական տարբերությունների խնդիրներով չեն տարվել, ուստի և շատ նյութ չեն թողել հարցերի քննության համար: Հարցերը շատ բարդ են, և կարելի է միայն ենթադրությունների սահմաններում որոշակի դատողություններ անել և որպես առաջին փորձ ստիպված եմ սահմանափակվել հիշյալ ենթադրություններով և հարցադրությամբ, որոնք թերևս խթանեն ուսումնասիրողների ուշադրությունը:

Կրո-Մանյոնի հայտնագործությունը բնավ չի նշանակում, որ բանական մարդու հայրենիքը հենց Ֆրանսիան էր՝ Կրո-Մանյոնը: Անվիճելի է, սակայն, որ առավել ուսումնասիրված հարուստ հնագիտական ու արվեստագիտական նյութը առայսօր հայտնաբերվել է Ֆրանսիայում՝ հենց Կրո-Մանյոնի շրջանում:

## ГЕОГРАФИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ПЕРВОБЫТНОГО ИСКУССТВА

АЛЕКСАНДР МАНУЧАРЯН

### Резюме

Исследователи первобытного искусства касались либо отдельных проблем, либо ограничивались материалами своих стран. Следствием такого отношения явилось, во-первых, полное неведение о первобытном, нередко очень богатом искусстве многих стран, во-вторых, незнание общей картины географического распространения этого искусства. Как показал сравнительный анализ многих изданий, изобразительное искусство первобытных народов имело строго локализованный характер. Основная часть находится в широком и длин-

<sup>8</sup> Տե՛ս Օ. Н. Б а д е р. Каповая пещера. Палеолитическая живопись, М., 1965, с. 15, 20, Տե՛ս նաև В. П. Любин. Изображения мамонтов в палеолитическом искусстве (по материалам Каповой пещеры).— Советская археология, №1, 1991, с. 36:

9 C h. M a u n t f. Painters aborigenes Australée. Milan, 1964.

ном поясе между 55°-30° северной широты, от Атлантического побережья Европы и Африки до дальневосточного побережья Тихого океана. Этот пояс пересекают три вертикальных. Первый начинается от Скандинавии и доходит до юга Африки, второй – от севера уральских гор до Индии, а третий двумя ветвями от Чукотки простирается по обеим сторонам Тихого океана. На юге завершается в Чили и Австралии. Удивительно то, что палеолитических следов проживания человека намного больше, чем следов изобразительного искусства. Оказывается, что не все пещеры, в которых жил человек, покрывались росписью. Причины данного явления не исследованы, более того, не замечены. Думаю, они связаны с демографическими взрывами, которые происходили видимо в те далекие эпохи и вызывали концентрации в отдельных местах. До крайнего запада люди доходили не всегда и поэтому искусство франко-кантабрии смогло развиваться сравнительно долго и плодотворно. Не малую роль играли и ледниковые явления, из-за которых массы людей перебирались на юг.